ՄՈՍԿՎԱՅԻ Մ.Վ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Հ.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ГИМНАЗИЯ ИМЕНИ А.Г.ЕРИЦЯНА ПРИ ФИЛИАЛЕ МОСКОВСКОГО
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ М.В.ЛОМОНОСОВА

✉ ՀՀ, ք. Երևան, 0070, Վարդանանց 17շ. ☎ +374 11 900111 (114) Email: School@msu.am

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

# ՄԱԹԵՄԱՏԻԿԱ (VIII դասարան)

*Հարգելի դիմորդ*

***«Մաթեմատիկա» առարկայի ընդունելության թեստը բաղկացած է 20 առաջադրանքից:***

***1–15 առաջադրանքներում լուծումները ներկայացնելը պարտադիր չէ:*** *Դրանք նպատակաուղղված են աշակերտների հենքային գիտելիքների ստուգմանը, որոնք համապատասխանում են հանրակրթական դպրոցի ծրագրի նվազագույն պահանջներին:*

***16 - 20-ը ընդարձակ լուծում պահանջող առաջադրանքներ են,*** *որոնց կատարումը պահանջում է մաթեմատիկայի տարբեր բաժիններից ունեցած գիտելիքների կիրառում: Դրանց համար պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքն առաջադրանքից հետո՝ նշված տեղում:*

***1 – 15 առաջադրանքից*** *յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է* ***2 միավոր:***

***16 – 20 առաջադրանքից*** *յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է* ***4 միավոր:***

***Թեստի առավելագույն գնահատականը 50 միավորն է:***

***Թեստի առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 120 րոպե:***

*Մաղթում ենք հաջողություն*

**Մաս I. (1-15).**

1. **Գտնել 11-ից մինչև 30 բոլոր կենտ թվերի գումարը:**

Պատ.՝

2. **Որոշել բազմանդամի աստիճանը. $(-10)y^7 + yy^8 - 10y^2$**

Պատ.՝

3. **Ի՞նչ թվանշանով է ավարտվում այն զույգ թիվը, որը բաժանվում է 5-ի:**

Պատ.՝

4. **Ի՞նչ թվանշանով պետք է փոխարինել աստղանիշը, որպեսզի ստացված $\overline{235*}$ քառանիշ թիվը բաժանվի 8-ի:**

Պատ.՝

5. **Գտնել 48-ի բոլոր բաժանարարների քանակը:**

Պատ.՝

6. **Գտնել 10-ի և 30-ի միջև գտնվող բոլոր պարզ թվերի գումարը:**

Պատ.՝

7. **Գտնել 9 հայտարարով բոլոր կրճատելի կանոնավոր կոտորակների գումարը:**

Պատ.՝

**8. Քանի՞ անգամ է ամենափոքր երկնիշ թիվը փոքր ամենափոքր եռանիշ թվից:**

Պատ.՝

**9. Արտահայտել գրամներով 7 ց 20 կգ 50 գ:**

Պատ.՝

**10.Գտնել թիվը, եթե նրա 75%-ը հավասար է 12-ի:**

Պատ.՝

**11. Գտնել $\frac{(2a+b)^2-4ab}{a^2\,b^2}$ արտահայտության արժեքը, եթե $a=\frac{1}{2}$, $b=2$:**

Պատ.՝

**12.Հաշվել. $2\frac{1}{3}-3\frac{1}{2}+2\frac{1}{6}$:**

Պատ.՝

**13.Լուծել հավասարումը.** $\mathbf{1,2x+1,5x+\frac{x}{2}=16}$:

Պատ.՝

**14.Լուծել հավասարումը. 5(x+0,2)=3(x+4,5):**

Պատ.՝

**15. Գտնել y= 6x-12 ֆունկցիայի գրաֆիկի՝ OX առանցքի հետ հատման կետի կոորդինատները:**

Պատ.՝

**Մաս II.** (16-20) *Առաջադրանքների կատարման համար յուրաքանչյուր առաջադրանքներից հետո պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքը:*

**16.** Գտեք ABC եռանկյան անկյունների աստիճանային չափերը, եթե $\angle A = 3\angle B$, իսկ $\angle C = 20^\circ$:

Պատ.՝

17.Խանութում վաճառվում էր 80կգ կարտոֆիլ: Առաջին գնորդը գնեց կարտոֆիլի 25%-ը, երկրորդ գնորդը՝ մնացածի 20%-ը: Կարտոֆիլի ո՞ր տոկոսը մնաց խանութում:

Պատ.՝

18 . Մի տրակոր, աշխատելով միայնակ, դաշտը կարող է հերկել 6 օրում, մյուս տրակտորը նույն դաշտը կարող է հերկել 12 օրում: Քանի՞ օրում կավարտեն այդ աշխատանքը երկու տրակտորներն, աշխատելով միասին:

Պատ.՝

19. Հավասարասրուն եռանկյան պարագիծը 55 սմ է, իսկ նրա սրունքների գումարը փոքր է հիմքից 15 սմ-ով: Գտնել եռանկյան կողմերի երկարությունները:

Պատ.՝

20. Մի քաղաքից մյուսը միաժամանակ շարժվեցին 2 հետիոտն: Առաջին հետիոտնի արագությունը 4կմ/ժ է, իսկ երկրորդինը՝ 6կմ/ժ: Քանի՞ ժամ հետո նրանց միջև հեռավորությունը կլինի 4կմ:

Պատ.՝